Երևանի քաղաքապետարան

CITTA' DI VENEZIA

Համաձայնագիր
Քաղաք Երևանի, Հայաստան, և քաղաք Վենետիկի, Իտալիա, միջև քույրացման վերաբերյալ

Քաղաք Երևանը, Հայաստան, և քաղաք Վենետիկը, Իտալիա, ներկայացված այստեղ Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի եւ Վենետիկի քաղաքապետ Ջորջո Օրսոնիի կողմից,

ճանաչելով հայերին և վենետիկցիներին միավորող 16-դարյա պատմական և մշակութային կապերը և նկատի ունենալով, որ միջազգային համագործակցությունը ամրապնդում է ժողովուրդների միջև կապերը ամբողջ աշխարհում, ստեղծում արդյունավետ հարաբերություններ քաղաքների միջև և ազգերի միջև և նպաստում տնտեսական, սոցիալական եւ բնապահպանական բնագավառներում խնդիրների լուծման փորձի փոխանակմանը,

Հաշվի առնելով նրանց ընդհանուր հատկանիշները և և այն փաստը, որ յուրաքանչյուրն իր տարածքում և երկրում ունի կարևոր դեր՝ ինչպես տնտեսական և այնպես էլ մշակութային տեսանկյուններից,

Ցանկանալով ամրապնդել Երևանի եւ Վենետիկի միջև տնտեսական և մշակութային կապերը՝ կյանքի որակը և բնակիչների բարեկեցությունը բարելավելու նպատակով, և զարգացնել երկու Քաղաքների միջև առևտրական եւ մշակութային հարաբերությունները.

ստորագրում են սույն Համաձայնագիրը քույրացման վերաբերյալ

Կողմերը պարտավորվում են աջակցել տնտեսական, զբոսաշրջության, սպորտի, մշակութային, բազմամշակութայնության զարգացմանը, այնպես որ յուրաքանչյուրի ունակությունները ստորև ներկայացվող գործողությունների միջոցով օգտագործվեն հանուն փոխադարձ շահի.

հայ և վենետիկցի գործարարների միջև հանդիպման առիթների ստեղծում՝ զբոսաշրջության, մշակութային ժառանգության կառավարման, քաղաքային կառավարման մեջ բարձր տեխնոլոգիաների կիրառման ոլորտներում թեմատիկ ժողովներ կազմակերպելու միջոցով,

մասնակցություն համատեղ ծրագրերի՝ ցուցահանդեսների, փառատոնների, տոնավաճառների և ժողովների շրջանակներում՝ երկու քաղաքների տնտեսությունները և մշակույթներն իրազեկելու նպատակով,
համագործակցություն մշակութային հաստատությունների և թանգարանների միջև և գեղարվեստական արժեքներին և արվեստի հավաքածուներին առնչվող համատեղ ծրագրերի զարգացում:

Սույն Համաձայնագիրը ստորագրված է երկու բնօրինակից՝ հայերեն և իտալերեն լեզուներով, որոնք երկուսն էլ հավասարազոր են:

Վենետիկ, 15-ը դեկտեմբերի 2011թ.

Վենետիկ քաղաքի համար	Երևան քաղաքի համար
Ջորջո Օրսոնի	Տարոն Մարգարյան
Քաղաքապետ	Քաղաքապետ